

ՀԱՅԿ Տ. Ս. ՏԵՎԿԱՆՑ

„ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ԲՆԱՐ“

ՄԱՍՆ Ա.


1910—1917



891.99
S-35

Թ Ի Ց Լ Ի Ս

Օպերան «Գրգռեալ» Լ. Պօղոսեանի, Լորիս-Մելիքեան փ. 1.
1918



891.99

ՀԱՅԿ Տ. Ս. ՏԷԿՆԱՆՑ

5-35

Այ.

12 MAR 2011

„ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՔՆԱՐ“

ՄԱՍՆ Ա.

1910—1917

Բ. Վ. 976

1005
22671

Խ Գ Զ

Թ Ի Ց Լ Ի Ս

Տպարան «Պրոգրես»



Մեծ Գրադարանի 1-ին հարկի 1-ին սրահ

ՀԱՅԿ - ՀԱՅԿ

Պ. Ա. Մյասնիկյանի անվան
ՍՅԱՆՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

58153

13 SEP 2013

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Թող յարգ. ընթերցողները ներողամիտ ոգիով կարգան կրկնակի դժբախտ արհեստաւորին գրուածքները, արհեստաւորին՝ որ հազիւ ժամանակ կը գտնէ գործիքներու փոխարէն գրիչ վերցնել՝ փորձելու «խորտակուած քնար»-ովն արտայայտել իր մաշուած սիրտը փոթորկող հայ մարդու ցաւերը իր անանուն տանջանքներով և համեստագոյն տենչանքներով...

Թող տարօրինակ չթուի որ լացին քով դրի և ժպիտ, չէ որ անոնք հարազատ քոյր ու եղբայրներ են միևնոյն մօրմէն ծնած... և միթէ ժպիտն ալ, մանաւանդ մեր ժպիտը, արտօսըն չէ հիւսուած...

Որպէսզի մեր պաշտելի օրրանը եղող վանայ նախնի գաւառաբարբառը մոռացութեան փոշիներու տակ չթաղուի՝ սրտով ցանկացայ տալ և կտորներ, անոր ամեն խաւերուն մատչելի հարազատ լեզուով:

Թղթի և տպագրութեան անօրինակ թանգութեան պատճառով ստիպուեցայ զրեթէ նիւթերու ամբողջ կէսը դուրս թողուլ: Երբ հանդարտուի աշխարհաւեր փոթորիկ, գուցէ տպագային հնարաւորութիւն ունենամ հրատարակելու ժողովածուն ամբողջութեամբ:

Հ. Տ. Ս. Տէվկանց

Թիֆլիս, 1 օգոստ. 1918 թ.

Պրագեայ եղբոր Յարութիւն Տ. Ս Տէվկանցի
նուիրական յիշատակին

ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՔՆԱՂ

Այ իմ քնար, փղոսկր անգին,
Ոսկի, ոսկի լարերով,
Ո՛ւր արտոյտի գուարթագին
Կարնան երգերդ ոգեխոով:
Գոհար կուրծքդ, քնքնւշ ու նուրբ՝
Անսիրտ բախտը խորտակեց.
Մարան ուրախ երգերդ սուրբ,
Վարդ ժպիտդ թառամեց:
Եւ խորտակուած սուրբ քնարէդ
Վշտի լարեր մնացին,
Արդ կարապի ողբ երգերէդ՝
Արիւն, արցունք կաթկթին:
Արի քնար, դարձող սրտիս
Ջարդ ու փշուր աւերակէն՝
Կերկեր ձայնովդ երգեր հիւսիր,
Սօսիր կեանքի ցաւերէն:
Ցաւեր անգութ, ցաւեր դաժան
Տառապալից, ախտաւոր,
Երգիր, երգիր, այ, քնար ջան,
Հէքին ցաւեր բիւրաւոր...:
Մինչև օր մը շանթեր գոռան,
Կեանքի դժոխքը այրեն,
Ցայնժամ երգիր ազատութեան
Երգն կախարդիչ ու վսեմ:

ԻՄ ԵՐԳԸ

Տանջանքի հետ ընկեր եղայ,
Ու վշտին հետ մտերիմ,
Մտերմիս հետ ճամբանյ ընկայ,
Ես վշտին եմ, վիշտը իմ...

Եւ կը մեկնինք իրար փարած
Այս սուտ ու փուճ աշխարհէն.
Մինչ Աստուածներ սրտով ստուած՝
Մեր արտասուք կը ծաղրեն. . .

ԿԱՐՕՏ ԵՄ ԿԱՐՕՏ

— Ա՛յ, սև սև՝ ամպեր, ճնշիչ ու մռայլ,
Հեռացէք անդարձ դուք մեր վաթանէն.
Քացէք, այն աշխարհ՝ ուր սուգն ու շիւան
Արիւն արցունքի գետեր կը յորդին. . .

— Հեռանանք, երթանք, բայց ո՞ւր հայորդի,
Քու վաթան մերին վաթանն է նոյնպէս,
Ցնորք. . . ո՞ւր այնքան սև ցաւ կը յորդի. . .
Մենք ալ սգաւոր, դարդլիւ կնք քեզ պէս

— Արեւն զրկուած, լոյսէն որբացած՝
Ա՛խ. . . սև շուքիդ տակ ուրուական դարձայ.
Տես, աչքերուս մէջ՝ արցունք չը մնաց,
Կարճաւ եմ. կարճաւ լոյսին հեռակայ. . .

ԹՈՂ ԳՐԿԵՄ

Նազելիդ իմ,

Պաշտելիդ իմ,

Մխացիդ հոգևոյս հըրեղէն թևով՝
Թող գրկեմ սիրտդ — ոսկի և զոհար
Հովին պէս թեթև թռչեմ նազանքով
Դէպի այն կախարդ աստղերն հրավառ.
Եւ աստղերուն մէջ, և աստղերուն հետ
Երգեմ քու սէրը և սիրուն աչերդ:

ԿՈՒՐԾՔԴ ՔՆՔՈՒՇ

Կուրծքդ քնքուշ՝ ովկիանոս մէ սով գեղեցիկ,
Ուր կը փրփրին կեանք — սէր, հմայքն ի միասին,
Ստինքներդ զոյգ՝ լուսաշաղախ հսկայ ալիք
Ուր խեղճ սիրտըս՝ բռնուած է խենթ փոթորկի...

Կուրծքդ աշխարհ մ'է դիւթական, սով նազելի,
Երկինք՝ ուրկէ զոյգ լուսիններ են ընկեր կախ,
Տէս թէ ինչպէս սիրտըս մոմի պէս կը հալի
Արև դէմքիդ ցոլք — շողերէն լուսածիծաղ...

ՎԷՐՔԻՍ ԴԱՐՄԱՆ, ՑԱՒԻՍ ԴԵՂԹԱՓ

— Վէրքիս դարման, ցաւիս դեղթափ
Կնւզեմ քեռէ այ ընկեր,
Սա տառապանք անեզր, անափ,
Անտանելի է. . ընկեր:
Ողջ մարդկութիւն կապարի պէս՝
Սուգած է խոր ցաւ — ծովուն,
Փուշ ու խաւար ճամբան ասես՝
Մահ կը հոտի, և արիւն...

— Վէրքիդ դարման, ցաւիդ դեղթափ
Կնւզես ինէ այ ընկեր,
Մեր վէրքերուն դարմանն անխաբ՝
Գիտութեան լնյան է ընկեր...
Վէրքիդ դարման, ցաւիդ դեղթափ
Կնւզես ինէ ջան ընկեր,
Մեր ցաւերուն դեղը անխաբ՝
Զիրար պաշտելն է ընկեր...

ԴԱՒԴԻՐ ՆԵՏԵՐ

Յօնքիդ աղեղի ներքև ծրարուած՝
Սրտեր յօշոտող նետերդ դաւադիր
Նազելիս, որո՞ւ կուրծքին ես ուղղած,
Դաւադիր նետերդ հրաշէկ, կարմիր...

Այդ խոշոր, թովիչ աչերդ հոգեհան
Թէ հեզիկ փայլով ժպտէն մելանոյշ,
Կնւսիկ, շնորհէ ինձ գոնէ մէկ վայրկեան՝
Դիտել երկնային պատկերդ քնքուշ:

Վարսերուդ սիրուն ափերը բացուած
Ականջներուդ մէջ՝ գոյգ ճերմակ կակաչ,
Դեռ չարձագանգեց իմ սրտիս մրկած
Սուրբ սէրը խնդրող հառաչն ցաւատանջ:

Էրնէկ թէ փունջ մը լինէի վարդի,
Բաբախող լանջիդ վերև թառէի,
Կամ շող մը հեզիկ, թրթռայի այտիդ
Վրայ, վարսերուդ մէջը մարէի...

Յօնքիդ աղեղին ներքև ծրարուած՝
Թովիչ աչերուդ նետերն դաւադիր,
Սիրատարփ սրտիս խորերն են գամուած,
Գթա՞ ինձ, կնւսիկ, սէրդ ինձ նուիրիր:

ՄՈՒՐԻԿԻՆ ԱՂՕԹՔ

—Քուրիկ

Մուրիկ,
Տրտում հոգևով
Հագուստներով
Պատառտուն,
Ամեն առտուն
Կը դիմես ուր,
Գունատ, տխուր:

—Ո՞ւր կը դիմէ

Որսորդներէ
Հալածական
Անմեղ այծեամբ...:

Արիւնլուայ,

Փշի վրայ

Թառած թռչուն՝

Ամեն առտուն

Կը թռչի ուր

Յուսակառուր...:

Կոտորածի

Աւերածի

Թշուառ զաւակ,

Սիրտն աւերակ,

Որ առն չունի,

Որ բոյն չունի,

Կը դիմէ ուր

Անոք, տխուր...:

Ահ, բեռնաւոր
Ես ահաւոր
Սնւր ցաւերով,
Սե՛ դարդերով,
Ամեն առտուն
Աստուծոյ տուն
Կը դիմեմ...
Եւ հոն չորած՝
Խաչին առաջ,
Բազկատարած,
Լալահառաչ,
Իմ խեղճ ազգին
Խաչուած ազգին
Ազատութիւն,
Ազատութիւն
Կը խնդրեմ...

*
**

Եւ իմ գիւցազն
Ու պատուական
Եզրայրներու
Կարմիր արիւն
Հոն միացած
Իմ զաւկացած
Շրթունքներու
Մրմունջներուն՝
Պիա ողորքեն,
Պիա բողոքեն,
Մինչև վառի,
Եւ բորբոքի,
Բացարձակին
Ահաւորին

Արդար դայրոյթն
Սոսկալի:
Եւ շուտափոյթ
Շանթերով լի
Իր վրէժը
Գահավէժ՝
Թափէ գլխին
Բռնաւորին:



ՎԱՆԱՅ ՎԵՐՉԱԼՈՅՍ

Վերին-Վարագէն գով ու գեղանուշ
կամ կարմրուրի սուրբ մենաստանէն,
Եւ կամ բարձրադիր «կարկուտ խաչ» քարէն,
Տեսած էք բնաւ Վանայ վերջալոյս:

Հայի կենսատու արեգն մեծափառ
Մեղմ կը խոնարհէր գէպի մայրամուտ,
Մինչ ոսկի հրդեհ կը բռնկէր վառ
Ամպերու սրտին խորերն քնքշուտ:

Ա՛հ .. այն փթթումներ, այն անմահ թոյրեր,
Քանի ցանկալի, քանի մոզական
կը յօրինէին հրաշալի պատկեր
Վսեմ հրաշափնո, բանաստեղծական...:

Հոն, վառ կը ցոլար գեղանի կուսին
Թուշին կարմիրը, ճերմակն շուշանին,
Ծովակն իր կապոյտ, մանկին իր ժպիտ՝
Ջօներ ամպերուն այն լուսափթիթ,
Որք ծիածանի գողտրիկ գոյներով
Թէև զարգարուն՝ բայց տխուր հոգևով
Պինդ գրկախառնուած ոսկի շողերուն
Անյագ համբոյրներ քաղէին մարմրուն...:

Ահա առջևդ տարածուի սիրուն
Վանայ ծովակը ջինջ, գեղածիծաղ,
Որ զառնակակիծ՝ բեկբեկ ու նուաղ,
Երգեց հառաչեց, մինչև իրիկուն...
Կսկ այժմ՝ հեզ, խաղաղ կը խոկայ լուրի՝
Քերթելու վաղուան երգն մեղամաղձիկ:

Լեռներու շղթան շար-շար պար բռնած՝
Լանջերու վրայ ծովակն են գրկած,
Ծովակն էլ դողդոջ իր սրտին վրայ՝
Ամպերն ու արեգ սղմած գուրգուրանյ . . :

Հրեղէն սիւնը արփուոյն կախարդիչ՝
Հանգչած ծովակի սրտին քնքուշիկ,
Ոսկեգօծումով մ՝ անմահ, զգլխիչ
Կը բոցավառէր մանր արծաթ ալիք:

Առ էր կղզոյն մէջ ամայի, ժայռուտ՝
Յաւերժահարսերն գողտրիկ, ջրասուն
Ապշած, հիացած, դիտեն մայրամուտ,
Հրացայտ աչքով, թովիչ և սիրուն:

Վարսերն տարուբեր շունչով զեփուտին,
Ականջներ տուած հեշտ մեղեգիին,
Այն Շամիրամի առփոստ ոգիներ
Կարծես Արայի, փնտռեն վեհ պատկեր...:

Մինչ ալախօսիկ թռչունք բիւրաւոր,
Աշխոյժ ծիծեռնական, բազերն գունազեղ
Եւ տնբախտ հայի բլբուլն սևաւոր,

Հնչելով վերջին նուագն ու զեղզեղ,
իրենց հոգեցունց, մրկած տաղերով
Բնութեան արարչին ներբողէին զովք:

Մինչ ծառաստաններ ծովափնեայ, սիրուն,
Գաղտնապահ ոգւոց նման սարսրուն,
Թաւշապատ բազկով երկինք վերամբարձ
Խնկ, խորհրդաւոր, մեղմ շըշընչիւնով՝
Փառաբանէին խորհուրդի Աստուած:

Եւ մինչ երազի մը պէս դիւթական՝
Փթթած ծովակի լանջերու վրայ
Կղզիներն կտուց, Լիմ և Աղթամար
Պատմեն վշտակոծ ալեաց բիւրեղեայ
Հին, արնոտ ցաւերն իրենց անհամար...
Եւ գմբէթներու սրբազան խաչեր՝
Մխիթիք վեհութեան թափեն կայծակներ:


Եւ մինչ ալետր վեհ, հսկայ Սիփանն,
Վարազայ լեռան դէմն ու յանդիման,
Վարդաձոյլ պսակ իր խոհուն ճակտին,
Դիտէր դառն արցունք տխուր Արտօսրին,
Որու կռնակէն հնամեայ Քրքուն
Գրգիւն իր սրտին միտ դնէր տխուր
Եւ լալկան երգը թախծոտ ծովակին
Արձագանդն իրեն տխրամած սրտին...

Եւ մինչ ծաղիկներն անմահ բոյրերով
Կը խնկարկէին սրբազան խորան
Բնութեան տաճարին, յաւէտ մոգական,
Արևն իր վերջին հրաժեշտը տալով
Լեռներու ետև կամփոփուէր հեռուն,
Ամպերու սրտէն ալ մրկած, խոսվ,
Շիթ-շիթ կը ծորէր վարդ-կարմիր արիւն...:

Քանի անգամներ անհուն ցանկացայ
Հատնել ու լուծուել վերջալոյսին մէջ.
Ուր երկնի անմահ ժպիտն կը թրթռայ.
Հոն ճախրէր հոգիս, առնէր ել և էջ...

Թէ օր մը յանկարծ մեծն Այվազօփսկին՝
Տեսնէր հրաշափառ Վանայ վերջալոյս,
Ապշահար, սարսուռն սուրբար դէպ վրձին
Թափելով սրտին ողջ խոռոմն ու յոյզ...

Ո՛չ Իտալիոյ զեղազուարճ ափեր,
Ո՛չ էլ ջինջ երկինք Շվէյցարական.
Վանայ վերջալոյս կարեն ցուցադրել
Իրեն գերազանց փառքովն յաղթական:



ԱՒԻ ՄԱՅՐԻԿ ՉԱՆ

— Ա՛խ, մայրիկ ջան, վիրաւոր եմ
Թուխ գեղեցիկ աչերէն,
Զուլում դարդի սև գետ կ'անցնի
Պզտո՛ր, պզտո՛ր իմ սրտէն:

— Մատաղ սիրտդ սէ՛րն է ծակեր,
Սէ՛րը սրտիդ ո՛վ է ձգեր ..
Կուսին կախարդ թուխ, թուխ աչեր՝
Զաւակս, քեզի դա՛րդ են բացեր
Մեր պարտիզին մէջ՝ թուփին քով,
Ուռի ծառ մը տնկիր, բալաս,
Երբ մեծանայ, ձգէ զով հով՝
Կը կարգեմ քեզ, դարդը՛ս բալաս:

— Սէ՛րը սրտիս կ'իջնամ սար ձոր,
Գլուխս քարին կը զարնեմ,
Եւ առիւծի ձեռքէն հզօր՝
Իմ բախտ ուռին կը խլեմ...
Լուսնի շողով, քրտինք ձակտով,
Մեր պարտէզը կը փորեմ,
Եւ սոխակի անուշ երգով՝
Զայն թուփին քով կը անկեմ:

Արևին տեղ՝ բոցոտ սրտովս
Անոր արմատ տաքցնեմ,
Եւ իմ բիւրեղ արցունքներով
Ես գանիկա կ'ոռոզեմ:

Թռչնակին տեղ՝ սէրս կ'երգեմ,
Երգովս սիրտը գուլթ ձգեմ,
Որ շուտ մեծնայ, շուտ կանաչի,
Քանի արևս կանանչ ի...:

Երբ գմբուխակ իր բազուկով
Գրկէ հոգիս, և անուշ զով
Զգէ վրաս, անուշ մայրիկ,
Այծեամի պէս ցատկըտելով
Քովդ պիտ վազեմ, անգուլթ մայրիկ,
Բանամ սիրտս բզիկ-բզիկ,
Որ իմ անկած ուռենու տակ՝
Օրհնես բալիդ սիրոյ պսակ...:



ՀԱՒԱՏԱ՝ ԿՏՐԻՃ

Հաւատան կտրիճ, յաղթութեան դրօշակ՝
Պիտի ծածանի՛ Մասիսի գլխին,
Պիտ փայլատակի՛ վրէժի կայծակ,
Պիտի ժպտի՛ քեզ այգը մայիսին...:

Անցնը լողալով արցունքի ծովեր,
Վիրաւոր սրտէդ գեռ արին հոսի.
Սպիններ ճակատիդ պսակ են հիւսեր,
Դուն ապրեցար վեհ կեանքը հերոսի:

Դարեր ու դարեր տառապանքի՛ ծով՝
Արնաքամ արին սիրտդ վիրաւոր,
Դուն տարնը բոլոր... մինչ քու շուրջ, քու քով՝
Մարեցան աստղեր ազգերու հօր...:

Յառնջ, միշտ յառնջ, հայ կտրիճ, յառնջ,
— Արնոտ յուշարձան տանջանք զրկանքի, —
Յաղթութեան դրօշակ վեհ կրճքիդ սեզմած,
Շանթ, կայծակ թափիր, արգար բողոքի:

Տես, ազատութեան աստղը կը վառի
Անամպ ու յստակ երկնքի ճակատ,
Թո՛յլ տուր, հայ կտրիճ, որ խնդութեամբ լի
Վեհ կուրծքիդ փարեմ, սիրով խանդակաթ:

Լ Ե Ռ Ա Ն Վ Ի Շ Տ Տ

Յաւիտեան անխօս լեռդ անարկու,
Լեռ սեւամաղձոտ, ասան, պաղատեմ,
Մինչև երբ այդպէս մունջ ու անլեզու՝
Լուռ կուրծք պիտի տաս, տարերքներու դէմ:

Խոհուն ճակատիդ, բնրճր ճակատիդ,
Արփին յար վառէ անդրանիկ համբոյր,
Մինչ դարերու բեռ կքած շալկիդ՝
Դարձեալ խորհուրդիդ մէջ կը թաղուես լուռ:

— Ա՛յ. թափառական տղայ բարեմիտ,
Կարէս ըմբռնել դուն հսկային վիշապ...
Ես երկրի անհուն ցանն եմ քարացած...
Խորեր վշտերուս ծով կը փոթորկի,
Եւ բլբուլ լեզուս այն օրէն լուծ՝
Երբ առջի անգութ հարւածն կայծակի
Կտրեց իմ ազատ լեզուիս թելերը...
Համը լեզուիս վրայ՝ թանձ են դարեր...
Ա՛խ... սիրտս է ծակուած հազար տեղերով,
Տես վտակ-վտակ սրտէս, աչերէս
Արին, արտասուք հոսի դարերով,
Յաւիտեան անխօս լեզու չունիմ ես...:

Իսկ երբ սև ամպեր գան ճակտիս հիւսել
Սուգի քօղ մռայլ, կարո՞ղ ես լսել
Արցունքիս երգը ցաւոտ ու ախուր,
Մինչ ես կը թաղուեմ ցաւերուս մէջ բիւր
Մտազբաղ ու լուռ...:

Բայց. . զժոխք կայրի ցաւոտ հողոյս խոր,
Ցնորքի աղա՛, պիտ լսես մի օր
Իմ բարբառն ազատ, իմ ձայնը ցնցող,
Երբ հրաբուխէս թռչին շանթ ու շող. . . :

Խ Ա Չ Ս

Թողէք որ տանեմ ծանր խաչս լուին,
Քրտնաթոր, կքած, ծնկով զողզոջուն,
Խորշակը բախտիս սև՛, անագորոյն
Թող խանձէ, մրկէ, զարունն իմ կեանքին:

Թող սև մանգձ կտրեմ, դառնութիւն համակ,
Ծով՛ ցաւի, վշտի՛, արցունքի՛, լացի,
Թող սիրտս կրծեն տանջանք, տառապանք՛
Թող որ զժոխքը ինձմէ սարսափի:

Էրնէկ, մենակ ես անողոք բախտի
Լինէի անմեղ զոհը դալկացած,
Բայց ո՛հ . . սղջ աշխարհ, թշուառ ու զրկուած՛
Նոյն սև ցաւերու մէջ կը տուայտի. . . :

ԼԵՈՆ ՈՒ ՔԱՂԱՔ

Կզգամ որ կնպրիմ միայն այն ատեն՛
Երբոր իմ մոլոր ոտներ կը զգուեն
Գու լեռանց ազատ
Վիթխարի՛, անյաղթ
Կուրծքը հարազատ:

Կզգամ այն ատեն թէ ես անմահ եմ,
Այս մահկանացու տարերքներու մէջ. .
Թէ սէրն, երազն են մենակ սո՛ւրբ, վսեմ՛
Տառապանքներու մէջը սև՛, անվերջ. . . :

Հոն կզգամ որ իմ դառնացած հողին,
Աշխարհին, նիւթին, դաժան օրէնքին
Հէք կալանաւոր, իմ արծիւ հողին,
Արևի պայծառ լոյսէն խելահեղ
Թափահարելով թևերն իր զօրեղ՛
Կը փշրէ կողերն իր զառագեղին,
Յաւէտ բռնակալ, երկաթ ու պողպատ,
Պըլլուած շողին, խնկաբոյր հովին՛
Կոյս ու զով օգին մէջ ճախրէ՛ ազատ. . .

Հոն, այն սէգ, հպարտ բարձրութեան վրայ
Անէացումի աստուածն կը թրթռայ,
Հոն մոռացումի դիւթական տաճար՛
Բայց է ցաւատանջ, հէք հողոց համար:

Այդ տաճարին մէջ՛ ես համակ սարսուռ,
Ես համակ ոգի, կը ծնրադրեմ լուռ,
Մենակ ու ազատ երազներո՛ւս հետ,

Վշտի աստծուն՝ իմ սեւ ու պաժան
Ցաւերս կը հեծեմ.. որք կանօւրանան,
Եւ տակաւ, տակաւ կը ջնդին անհետ...:

Եւ ես մոռացած իմ անհուն վիշտեր,
Անմահի մ' վայել քաղցր, անդորր քնով՝
Մեղմիւ կը փակեմ իմ խոնաւ աչեր
Երջանկացումի անմահ երազով...:
Այդ բարձրութենէն երջանիկ, վսեմ
Մինչ սահեն ոսներս, և ես զլորուեմ
Աղտեղութեան բոյն քաղաքն տափարակ,
Կեղծիքի, սուտի թիւնալից քաղաք:
Աղտեղութիւններ շուրջս կը պատեն,
Ահ... ես կենդանի՝ մեռած եմ արդէն:



ՆԱՄԱԿ ՉԱՌԻ

Իջիր կոսնկ, և անցիր
Պատուհանիս առջևէն,
Արցունք խեղդեց իմ աչեր՝
Երբ առի ես ձայնդ հեռուէն:

Պահ մը կեցիր, կ'ազաչեմ,
Հարցմունք ունիմ բիւրաւոր,
Եարիս կարծա կը քաշեմ
Անմխիթա՛ր, մենաւոր:

Եարս իր երկար վարսերից
Մետաքսեայ թել չհլուեց,
Անով նամակ սիրալից
Քու ոտներուն չկապեց:

Դարեր սևնդ ամիսներ,
Եարէս չունիմ ոչ մի լուր,
Կեանքեր մաշող ամիսներ,
Կսպասեմ ես. բայց իզմբ...:

Է՛ս ցաւերուն, վիշտերուն,
Սիրա կարո՞ղ է զիմանալ,
Մենակ իմ եարը սիրուն
Ցաւերս կարէ իմանալ ..

Կոսնկ, դարձիր զնա՛ ես,
Քտիր եարբս նազանի,
Թէ նամակ մը բերես հեազ՝
Կեանքիս կէսը քե՛զ լինի...:

Տես, թէ ի՞նչպէս հալ ու մաշ՝
Աչքս ճամբին եմ յառած,
Նամակ մը առ, ու տուր վազ
Կեանքս մազից է կախուած...

Կոունկ թռակ ու գնաց,
Քաղցր կռկոտցն զեռ լսեմ,
Աչքերըս թաց, սիրտս բնց
Վերադարձին կապասեմ:

ՄԱՂՁՈՏ ՄԵՆՈՒԹԻՒՆ

Մաղձոտ մենութիւն, վսեմ լոռութիւն,
Եւ քնքո՛ւշ, թովիչ աչերն կուսական,
Խորհուրդը գրկող չքնաղ բնութիւն
Ինձ երանութիւն երազել կուտան:

Բայց երանութեան ծաղիկս երկնային,
Աւանդ, չփթթած՝ կը թառմի իսկոյն,
Դոհ ու բոհին մէջ կեանքի դժոխքին՝
Խուսափող ոսկի անուրջի մ'հանգոյն:

ԱՐՏՆ ՈՒ ԳԱՌՆՈՒԿ

Ոչինչ այնքան գեղեցիկ է, ցնորալից,
Որքան արտին վէտվիտումը երազկոտ.
Ոչինչ այնքան հրաշալի, հրապուրիչ
Քան գառնուկին մօր կաթ ծծեն ին՝ հմայքոտ:

Կը ծրփծրփայ արտը կեանքով առլըցուն,
Խորհրդաւոր մըրմունջներով գեփիւտին,
Եւ ոչխարներ դմակներով օրօրուն՝
Կեանք կը ծորեն անմեղունակ գառնուկին:

Կը փրսփրսման ոսկի հասկերն մեղմօրէն
Գաղտնիք կեանքի, աշխատանքի օրհնութիւն.
Գառնուկները կայարուելով կը մայեն,
Կը ձայնակցեն անմահ երգին հասկերուն:

Ո՛հ, ի՞նչ այնքան գեղեցկագոյն, հրաշալի,
Որքան արտին վէտվիտումը ցնորալից,
Եւ ի՞նչ այնքան յանկուցիչ և պաշտելի,
Քան գառնուկին աներես կախն ստինքից:

Էրնէկ մեռնիմ ոսկեկոհակ արտին մէջ,
Հասկեր խօսին դամբանական ինձ վերայ,
Գառն ու մաքին դմակներով իրենց պերճ՝
Կայտուէ՛ն, կեանքի երգը երգեն մըշտակայ...:

Հ Ա Յ Ո Գ Ի Ն

Նետը թռաւ, ինչպէս կայծակ իր աղեղէն լայնալիճ,
Եւ շանթահար տապալեցաւ հսկան թիկնեղ, վատասիրա...
Քաջն դափնեզարդ կամարներէն յաղթական՝
Դիտեց մահը բռնաւորին այն գոռոզ,
Ազատութիւնն՝ իր լեռներուն հայրենի...

Նուիրական, երկնասլացիկ սօսիներ,
Խորհրդաւոր սօսափիւնով մ' անմեկին՝
Նուրբ շրթունքով՝ թարմ ներբողներ հիւսեցին
Հայրենասէր Հայ դիւցազնին անվեհեր...:

Հովը գուշակ՝ այսպէս մեկնեց այն պատգամը երկնածոր,
«Պիտի երկնէն հայ ծովերը ծիրանի,
«Հայ երկիրը չքնադագեղ, բեղմնաւոր,
«Եւ հայ երկինք աստեղագարդ, զիցաբնակ,
«Պիտի ծնին յաղթ Վահագներ հրահեր,
«Եւ բոցավառ արեգները նորանոր
«Պիտ թաւալեն ամանորէ ամանոր...
«Բայց... պիտի գան՝ օրեր լացի և սուգի,
«Երբ հիւսիսի շնչեն հողմերն բօթաբեր...
«Երբ աստուածներն գահակործան՝ վար թափթփեն
երկնքէն...»

Հոս՝ սօսիներ լուցին... արտասուեցին սօսիներ...:

* * *

Եւ այն օրէն հայրենասէր հայ ողին՝
Մոլեգնաբար գնաց փարել վեհափառ
Կատարներուն նուիրական այն սարին,
Ուր թառեցաւ Նոյի տապանը հսկայ...
Եւ դարաւոր փոթորիկներն ցրտաշունչ՝
Զնւր ջանացին ազատասէր հայ ողին
Վտարել այդ բարձունքէն...:

Ն Է Զ Ի Ժ Պ Տ Ա Ր

Գոհարիկ,
Քո հայրիկ

Ինչէր, ինչէր խօսեց արդեօք, իմ մասին...
Մեր սրտերը երբ բաբախեն միասին.
Անուշ լուսնեակն աստղերէն էլ վար իջաւ:
Ժեռ սիրտ հայրիկդ արդեօք, բնաւ չը զիջաւ..

Ոսկեթել արևս շիջաւ:

Վեր առ Գոհար, սիրուն ընքուերդ կամարի
Նայիր երկնի այն փառահեղ կամարին,
Ինչէր խօսին զոյգ վառ աստղերն քով-քովի,
Թէ լոբմ ես, այդ անմահ գեղդ ո՞վ գովի,
Հերիք անգուժ, որքան հոգիս խռովես,

Սիրտս մրկէս խորովես:

Սարի կաքաւն ան լինչ անուշ կտկտայ,
Սարի քարն էլ իմ վիճակին կը գթայ,
Ինչո՞ւ միայն նազելի կոյսդ թուրս աշուի,
Կաս անտարբեր, սիրահարդ թող խաշուի՞,
Անգուժ, գոնէ յուսատու բառ մ' ինձ ասա՛,
Անգուժ և բախտս, իմ մուրազին չհասայ:

Լ ՈՒ Ս Ի Ն

Լուսին, միսթիք ոսկի շողերդ մելամաղձիկ, երազուն՝
Երկնային սուրբ անուրջով մը սրտիկս առնէն օրօրուն,
Եւ ես հոգևով անէացած ստորնաքարը այս երկրէն՝
Աստղերէն վեր կը սաւառնիմ, յոյզի թևով հրեղէն:

Բացարձակին կնիքն ես դու, դրոշմուած
Վէհ, անկնճիռ, հսկայ ճակատն երկնքին,
Իրւր շողշողուն, վառ աստղերով կէտկիտուած՝
Երկնային, սուրբ, աղամանդեայ քերթուածին...:

Կիթանն ես դու, աստղերուն փառք նուագող,
Թէ խտացած մեղեդինն ես երկնային,
Որ լուսթեամբ իսկ սրբազան՝ վսեմին
Ներքո՞ղ հիւսես, կազդես սրտից յոյզ ու դող:

Խորհրդաւոր սրտիդ խորերն հոյաշէն՝
Մուսաներու զգեա՞կ կանգնի ոսկեղէն,
Ուր լուսաճեմ ոգիք երկնից անհամար՝
Բոցավառնն քերթողի սէրն ու հանճար:
Կամ անմահից ձեռքէն փրթած դուն վարդի
Կոկո՞ն ոսկի. . . անմահ զանգն ես երկնքի:

Հեղիկ դէմքդ, այդ մելանոյշ, քնքուշիկ,
Ինչո՞ւ այդպէս է գունաթափ ո՞վ լուսին,
Միթէ դմն էլ վիշտ, ցաւ ունիս անմեկին,
Դարդեր կրծող սրտիդ թելերը փափկիկ...:

Այդ տխրանուշ դէմքիդ դալնէն արծաթի
Կուզայ մասնե՛լ սև ցաւերը քո սրտի,
Եւ դուն թշուա՞ռ, հիւժախտաւոր մշտական,
Հատնիս, մեռնիս, հազիւ դեռ մէկ ամսրկան...:

Բայց հրաշակերտ, վսեմ մատը անեղին՝
Կը պարզէ քեզի նո՞ր կեանք, նո՞ր արև,
Եւ դուն կայտա՞ռ՝ մանկան նման նորածին,
Երկնից կամար թռչիս գուճրթ, լուսաթև:

Դուն գուրգուրոտ մօր մը նման հարազատ՝
Շոյհս կուսից վարսերն սև սաթ, ոսկեթէլ,
Եւ սուրբ սիրով, գորովալից, անարատ
Նուռ շրթներէն համբո՞յր քաղես անարգել:

Որքան հոգիք երկրպագու ո՞վ լուսին,
Արտասուքով աղաչաւոր քեզ բացին
Իրենց սրտերը արիւնոտ, ցաւատանջ,
Վիշտն ու կսկիծ, ժպիտ, արտօսըն ու հառաչ...:

Ձոյգ սիրատարփ հոգիներու սարսուռն՝
Անմեղ ու ջերմ համբոյրներուն լուռ վկայ,
Քանի՞ գաղտնիք, խոստում, իղձեր սիրասուն,
Կը ծրարեն սրտիդ ծալքերն արծաթեայ...:

Կուսին թովիշ, ծաւի ծաւի թուխ աչեր
Ծովացած դառն արտասուքով՝ ան ինչէր
Խնդրեն քեզմէ, այրած սրտից պալասմն,
Թէ հեռուներ մոլար շրջող սիրական:

Հէք պանդուխտներ կարօտամաշ ու մրկած,
Քանի՞ բարև, համբոյր ունին ուղարկած
Սուրբ շողերովդ իրենց պաշտած ձետերուն,
Թշուառութեան մէջ տապակուող ամուսնոյն...:



ՀՐԱԺԵՇՏ

Մնաս բարեան, թռչնակ սիրուն,
Ախ, ինձ չանես մտահան,
Ծիծեռնակի թևովդ նախշուն՝
Ե՛կ, թառխը իմ պատուհան:

Թ՛նփ տուր թևերդ, ձայնովդ անուշ՝
Երգէ ինչ որ կը սիրես,
Եւ ճուղովդ անսուշ, քնքուշ,
Ասան, թէ «չեմ մոռցած քեզ»:

Ա՛խ, ՇԱՏ ՍԻՐԵՑԻ

Ա՛խ... շատ սիրեցի լեռներու վճիտ աղբիւրը զանգակ,
Շատ, շատ սիրեցի գեղանի կուսին աչերն սևորակ.
Ջուրը զովացո՛ւց ճակատըս այրող, պապակըս մրկող,
Դարգերս ծովացո՛ւց ոգեհան, անզուժ աչերն դիւթող...

Արցունքս կուլայ վճիտ աղբիւրին ծոցը բիւրեղեայ,
Անզուժն կը խնդայ հառաչանքներուս, մորմոքիս վրայ..
Ուռենին կանաչ կը գգուէ սիրար վճիտ աղբիւրին,
Մինչ սիրաս որբ՝ ծիւրի՛ մարմըրող շողին պէս
վերջալոյսին...:

Ովկիանոս քեզ հայելի՛ վիթխարի,
Կոյս անտառներ թելերն են սուրբ կիթառի,
Ասաղերն բոլոր ոսկի սրտիդ սիրահար,
Ծառն ու ծաղիկ՝ գեղոյդ կը նետեն բուրվառ...:

Լեռն ու բլուրն ալ պար բռնած շար ի շար՝
Զեփիւտին հետ գովքդ ներբողեն յամբաբար,
Դարունն փափկիկ գորզն փռէ ոտքիդ տակ,
Ուր ցնորուած կայտո՛ւք բիւրեղ, ջինջ վտակ:

Բայց դուն համեստ, բիւր պաշտամանց անտարբեր
Մեղամաղձիկ լուսթեամբ ես համակուեր...:

Պատկառելի լուսթեան մէջ գիշերուան
Շիրիմներուն մխիթարիչ ս՛վ ողի,
Ցուրտ ոսկերաց շրթներդ ինչե՛ր փսփսան.
Արդե՛ք, դրախտի վէպերն ցնցոյ, այն ոսկի.. :

* * *

Երկնի խոհուն դուն անբարբա՛ն պատմաբան,
Երբ իրաւունք, արդարութիւն յաղթական,
Գան տիրանալ այս անիրաւ աշխարհին.
Երբ թշուառի արցունքն իսպա՛ն ցամաքին,
Մի՛, մի՛ մոռնար լուսին, հէքիս ցուրտ դամբան,
Զի սարսուռն մարմնացումն ես զթութեան...:



Կը մըռնչէ՛ ովկիանոսն վիթխարի,
Սե՛, սե՛ գիշեր մը կը չոքի իր կրծքին,
Կուրծք՝ որուն տակ տարտարոս կը գալարի,
Մահաշըշուկ սարսափներով անդունդին:

Իմ խեղճ նաւակ առագաստներն պատառուն,
Մըրըրկայոյց ալեաց մէջը փրփրազէզ,
Հոգեվարքի հառաչանքը շրթներուն՝
Լեռնէ անդունդ կը գլորուի գահավէժ:

Հէք ճամբորդներն խելակորոյս, ուշաթափ՝
Խօլ սեղմումով մը կը փարեն մոլեգին
Ամեն ինչի... ճիչ, վայնասուն ու խուճապ
Կ'ընկերանան տարերքներու քմայքին:

Հեզնանքի թուք կը շարտեն ալիքներ
Ճամբորդներու ճակատներուն մահաախպ...
Անդո՛նդ, խաւար մահու սե խաղն են սարքեր,
Ո՛հ, ո՛ւր ցամաք, ո՛ւր փարոսը լուսաբեր...:



Նրստանձ էին քով քովի
Պարտիզին մէջ խնկարոյր,
Լնու, սիրատարփ, գողունի
Կը քաղէին ջերմ համբոյր...

Չարածըճի պատանին՝
Արագ իր շուրջը գիտեց,
Եւ սիրունու ականջին՝
— Ե՛կ, ոչ ոք կայ — շըշնչեց:

Կոյսն շնորհալի նազանքով,
Հարցուց մեղմիկ — իսկ վերե՞...
Յաղթ պատանին աշխուժով
Վրայ բերաւ — լիք տերև ..

Պատասխանին սրամիտ՝
Անվերջ ծիծանդ յաջորդեց,
Անոնց սըրտեր սիրափթիթ՝
Երջանկութիւնն օրօրեց...:

Այդպէս գիտէ սէրը միշտ...
— Մաքուր էր դեռ անոնց սէր —
Երբ կը սահի՛ օրն անվիշտ,
Ո՛վ դուք անգին՝ ըսպէներ...:

ԱՆ, ՔԱՂՏՐ Է ԻՆՁ ԵՐԱԶԵԼ

Ա՛հ, քաղցր է ինձ երազել,
Հոգւոյ անճառ վերացումով
այն ատեն՝
Երբ ողջ բնութիւնը հանգչած,
Վսեմ գիրկը լուսթեան՝
Կը ննջէ մոռ, մոռ
անուշ...:

Երբ լճակըն արծաթեայ,
Հեզամնջիկ ալիքները ծրարած,
Հուսինն անուշ
Փափկիկ սրտին վրայ սղմած
Կը ննջէ մոռ, մոռ
անուշ...:

Երբ լեռները իրենց հպարտ
Ճակատները խոնարհած՝
Կաքաւներով, եղնիկներով,
Հուսնի անմոռ շողերուն տակ
Հանդարտ, հանդարտ կը ննջեն
մոռ, մոռ անուշ...:

Երբ աստղերը վառվառն,
Անմահ, վսեմ լուսթեան երգ
Իրենց բոցոտ շրթներուն.
Եւ աղամանդ աչերուն խոր
Քաղցր ժպիտ երկնային
Քնքոռ, քնքոռ
Կը ննջեն մոռ, մոռ
անուշ...:

Այն ատեն՝

Երբ գեղանի կուսին թովիչ
Աչեր մեղմիւ կը փակուին,
Երբ կոյսն ու սէր
Մորփէօսի խորհրդաւոր
Աշխարհին մէջ զիրար գտած,
զիրար զրկած,
Երանութիւն երազելով
Կը ննջեն մոռ, մոռ
անուշ...:

Երբ թռչնիկներն բոյնին մէջ
Կտուց-կտցի, սիրտ սրտի
Մայրերով, ճուտիկներով՝
Շըշըճնջող տերևներու
Հէքեաթներով երանաւէտ,
Հուսնի երազ շողերուն տակ
Կը ննջեն մոռ, մոռ
անուշ...:

Երբ ալ դադրին երկնի կիթառ
Ծառերու սօսափիւնը խորհրդաւոր
մեղանոյշ...:

Երբ առուակը բերեղ, վճիտ,
Իր հառաչանք, սուգն ու երգեր
նուագելով՝

Երազի մէջ կը թաղուի...

Ա՛հ... այն ատեն՝
Թողէք որ ես ալ ննջեմ,
Մոռ, մոռ անուշ բնութեան
Տանճարին մէջ սրբազան...
Թող լուսթեան մեծ ու վսեմ

երգովն անձառ.
Յոզնած հոգին ցաւագար
Հանգչի պահ մը անուշիկ
Լուսնի շոյող համբոյրին տակ
Քնքուշիկ.
Թող ես թշուառ մարդկութեան
Տաժան ու ծանր
Տանջանքներս թեթևացման
Ոսկի երազով՝
Պահիկ մը, վայրկեան մը
Հանդարտ ու թեթև
Նընջեմ մնւշ, մնւշ անուշ...:
Եւ երանի ալ չարթնամ
Այդ երազէն սրբազան...
Այլ վշտակոծ հոգոյս թևեր
Թնի տալով,
Սիրոն, քնքնւշ աստղերէն
Ան այն բոցոս աստղերէն
Էլ վեր, շատ վեր սաւառնեմ
Եւ լուծուիմ, հնչիւն դառնամ
Սուրբ ու վսեմ լոռթեան
անմահ երգին...:



ԶՈՒՆԻՍ ԲԱՐԲԱՌ

Լնւռ ես աստղիկ, չունիս բարբառ,
Աչքսով, ունքով կը խօսիս,
Սև մորմոքի հրդեհով վառ՝
Փայլ սւ շողով կը խօսիս:

Աստղիկ, սիրաս էլ տխուր քեզ պէս,
Տառապանքի հրդեհով
Կայրի, վառի, մըրկի քեզ պէս
Սև աշխարհիս ցաւերով .

Նա էլ քեզ պէս չունի լեզու,
Դարդ ու ցաւով կը խօսի,
Սև աշխարհիս տառապանքով
Լաց, մըրմուռով կը խօսի...:



Ս Ա Լ Ն Ա Պ Ա Տ

Անմահարար և սառնորակ
Քաղցրակարկաչ առուի ափին,
Ստուերախիտ ուռենու տակ
մեղմօրօր՝

Ահ, թէ պահ մը հանգչէր հոգին
■ իմնոր՝

Ահ, թէ արցունքըս միանար
Ականակիտ աղբիւրին,
Մասյլ ճակատըս հրավառ՝
Թէ համբուրէր զով քամին,
Գնացէ ցաւերս, վիշտերս այրող՝
Պահ մը սիրտս թո՛ղ տային,
Յոյսի երազ լուսաշողշող՝
Ծաթէր հոգոյս խո՛ր մթին...

Այդ աղբիւրը պէտք է լինէր
Սալանապատը ջինջ, կաթնահամ,
Ուր առաւօտ ինքզինք զիտէր
Արագավազ սիրուն այծեամ...:

Ուր առաւօտ լուսաբացին՝
Կաքանները շօրօր-մօրօր,
Ճուտիկները շուրջ հաւաքած՝
Իրենց սրտիկ զօվացուցին:

Ուր գիշերը՝ զոյգ վառ աստղեր,
Անդրադարձան, շողշողացին,
Եւ աչագեղ փէրի կոյսեր՝
Վարդ երեսները լուացին...:

Անմահարար և սառնորակ
Սալանապատի սիրուն ափին,
Ստուերախիտ ուռենու տակ
Ման գայ մուրար դեռ իմ հոգին...:

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ

Ինձի բերէք Լիբանանու մայրիքէն
Շինեմ նաւակ այս ձեռներով զողողուն,
Եւ անցնիմ արցունքներուս ծովերէն,
Երթալ, գըտնել կարօտամաշ իմ որդոյն:

Արև չկայ, դադար չկայ ինձ համար,
Արցունքներուս ծովերն են միշտ փոթորկոտ.
Թող նաւակս փըշրեն խութերն անհամար՝
Ջարգուած գլուխս իյնայ միայն որդուս մօտ . .

Ջարգուած գլուխս իյնայ դարիպ բալիս մօտ,
Սառ շրթներըս հպին մուկսր ստներուն,
Արիւնս խմող, անխ, չ'քաշէ թող կարօտ...
Կեանքս մատանդ կանեմ բալաս, քո սիրոյն:

ԸՆԿԵՐ ԶԱՆ

(ՎԱՐԴԱՆ ՊԱՊԵԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Ընկեր ջան,
Հոգի ջան,
Հէքին ցաւով՝
Եւ թշուառին սև դարդով
Ես լցուած,
Տապակուած:

Երկնի լալկան
Թուխ ու մռայլ ամպի նման
Եւ մերժուած կուսի նման,
Տխուր ես ու դառնացած:

Թախիծ ովկեան սև աչերէզ՝
Շանթ ու կայծակ կը թռչեն,
Եւ սրտիդ մէջ, մըրբիկ-թաթառ՝
Յաղթ առիւծներ կը մոնչեն...:

Նամարդ աշխարհ՝ ստոր աշխարհ
Անկեղծ սիրտըդ կը յուղէ,
Եւ թշուառին ցաւը ծով, սար՝
Կարմիր արիւնդ դեռ կըսգէ...:

Դուն շիկացած՝ բոց աչերով
Քու բաշերըդ կը թոթուես,
Առիւծի պէս մոնչելով
Կեանքոս սիրտըդ կը պատուես...:

Այդ սուրբ սրտէդ,

Անգի՛ն սրտէդ,

Դարդի մաղձոտ սև՝, սև գետը
Առան, առան կը յորդի,
Եւ թշուառի արցունքին հետ՝
Վիշտը իւր մէջ կը խեղդի...:

Եւ դուն խրոխտ, և դուն հպարտ՝
Դեռ կը նայես ակնապիշ,
Թուխ ամպերու մէջէն հանդարտ՝
Դէպ Արեալոյսըն բամբիշ...:

Կարմիր արեանդ շառաւիղը
Ամպերուն մէջ կը ցոլայ,
Եւ արշալոյսըն կենսատու
Վրադ անսըշ կը թրթռայ...:

Մինչ աչերըդ՝ մեզմ կը փակուին,
Եւ կը ննջես յաւիտեան...
Դուն հանգիստը հէք զրկուածին՝
Կեանքովդ գ'ես, ընկեր ջան...:



ԳԻՆՈՎ ՍԻՐՈՎ ԵՄ ԳԻՆՈՎ

Յնորալից յորդումով
Բիւր տենչանքներ անմեկին՝
Անսուշ, քնքուշ տազնապով
Ողողած են իմ հոգին:

Լեզու բացուեր է սրտիս
Հազար ու մէկ ճռուողով,
Կրակ ընկեր է հոգիս,
Հոգիս խուսով սուրբ սիրով...:

Քաղցր ոգի մը կերպով,
Հեզիկ ընկեր մը կուզեմ,
Որուն մէջ սիրտըս յորդի,
Յորդի, յորդի հանդարտի...:

Բիւր տենչանքներ անմեկին
Յնորալից յորդումով՝
Ողողած են իմ հոգին,
Գինսով սիրով եմ զինով. :



ՀՈՐԻՋՈՆՆԵՐ ԱՆԾԱՆՕԹ

Անցնել կուզեմ այն հեռաւոր
Ճամբաներէն անծանօթ.
Անծանօթին եմ ուխտաւոր
Զքնաղ տեսքին իր կարօտ...:

Մենակ թռչել, անցնել կուզեմ
Ճամբաներէն այն դերբուկ,
Ի՞նչ փոյթ ինձ խեռ փոթորիկներ
Կարհամարտեմ ձիւնն ու բուք:

Պիտ մազլցեմ անմատչելի
Ճամբաներէն խորդ ու բորդ,
Փնտուեմ պիտի, զանեմ պիտի
Անծանօթը հրայրքոտ...:

Թէ ոտքիս տակ խոյս տայաւագ,
Իյնայ ժայռը իմ զլխին,
Թէ գահավէժ, արագավազ
Գլորուեմ խորն անդուհղին՝

Դարձեալ տենչայ պիտ իմ հոգին
Հորիզոններն անծանօթ...
Ուր ցնորքներն երամովին
Գգուեն վարդէր խնկահոտ...:


*
*

Ու անծանօթ ճամբաներու
Եզերքներէն դիւթական՝
Անուշ զօղանջը զանգերու
Հնչէ հոգոյս սուրբ խորան...:

Եւ կը ձգուիմ ես հմայուած
Այդ կոչերէն մեղանոյշ,
Մինչ իմ ստները մոլորուած՝
Կը յոշտեն քար ու փուշ...

Հնչէ՛ զանգակ, հնչէ՛ առուշ,
Ոգևորի՛ր իմ ճամբան,
Արև մասն... մնացի՛ սուշ,
Շուրջըս բուեր կը վխտան...

Հնչէ՛ զանգակ, մնջէ՛ անուշ,
Ոգևորի՛ր իմ ճամբան,
Թող ամբանան ստներս անուժ՝
Անցնի՛ ձանձրոյթ յոգնութեան:



ԿԸ ԺՊՏԻ ԻՆՁ ԱՊԱԳԱՆ

Վաթան ջան,
Ողջ յօշտուած, արիւնաքամ,
Ցուրտ ու խոնաւ անկողնիդ մէջ
Պառկած անյոյս, մահամերձ՝
Համբես շրփոթ տանջանքներուդ
Դարեր տևող վայրկեաններ...
Եւ սլինդ փակած աչերդ պղտոր՝
Մահ կը խնդրես... կարճելու,
Տառապանքներդ անուշի...

Բայց մի հողիլիս, մի լքուի՛ր դուն,
Յոյսդ մի թաղեր բրգբրտուած
Սև աւերակ կուրծքիդ տակ...
Խոր դողանջը որ կը լսես՝
Չէ, չէ երբէք բօթաբեր
Դամբանական քու թաղման...
Դեռ կը շնչես... դուն չէս մեռած,
Չես մեռնելու յաւիտեան:

*
**

Ղօղանչին հետ քաղցրամրմունջ
Կը հասնի իմ ականջին,
Մարտի գոռումն մըրրրկաշունչ
Դիպագներու պճաքարին...

Եւ անձանօթ, գոռ լեռներու
Ճախտներէն յաղթական՝
Անուշ ժպտով մը կենսատու՝
Կը ժպտի ինձ ապագան:

ԽՈՍԱՑԻՐ ՀՈՎԻԿ

Հովիկ խնկաբեր,
Օր մը երջանիկ՝
Խոստացիր երգել
Ինձ երգ մը գողարիկ...

Խոստացիր հովիկ
Շրթներովդ անսուտ,
Որ ես հանգարտիկ
Գրկանձ մայրամուտ՝

Իջնեմ անվրդով
Ննջել հողին տակ...
Նոյն իսկ գարերով
Կարօտ աչքս փակ՝
Պիտի սպասեմ
Քու երգին վսեմ...

Մինչև որ հովիկ,
Երջանիկ մի օր
Փութաս դուն մեղմիկ
Կարդալ ինձ օրօր...

Եւ երգով զուարթ
Անուշ ու գողարիկ,
Ճռողե՛ս... «Ազան
է քո հայրենիք»:

ԴՈՒՆ ԿԸ ԳՆԱՍ

Դուն կը գնաս ծաղկանց միջով,
Դէմքիդ ժպիտ երջանիկ...
Ես վեր կելնեմ փուշ ուղիով՝
Դէպ գողգոթան մահաձիգ...

Գնաս բարեան, բախտը քեզ հետ,
Անուշ երանգդ իմ սրտի,
Խաչիս վերև՝ բուրումնաւէտ
Արշալոյսըդ թող փթթի...

Մոռացութեան փոշիին տակ՝
Բզքտուած սիրտըս թաղիր...
Եւ տանջանքիս խնլ, անգիտակ՝
Վրան մեծկակ քնք մը դիր...

Երբ չկրնամ տոկալ, հոգիս,
Եւ կարօտովդ ոգեվար
Մեռնիմ... անունդ քաղցր շրթունքիս՝
Ա՛խ, գերեզմանս մի՛ մոռնար:

ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ԳԵՂՋՈՒԿ

Կանաչիր անտ իմ, անխ շուտ կանաչիր,
Սառեր, քարանցեր է երկինք վաղուց,
Հերկեցին քեզի մասներըս անուժ,
Ոռոգեց եղբորս արիւնը կարմիր,

Կանաչիր անտ իմ, շուտով կանաչիր,
Նօթի են ճատերս, յոյս իմ կանաչիր:

Յորդիր անտասուք աչերէս պղտոր,
Ոռոգիր արտըս ծարաւէն մրկած,
Չորացան արեան ծովերը ի գուր,

Երկինքն է ժլատ... աշխարհ քարացած...

Կանաչիր անտ իմ, յոյս իմ կանաչիր,
Պալէքս են նօթի, տկո՛ւր, կանաչիր:

Դաժան դարգերու բեռան տակ կքած
Կանակս եմ տուեր աւերակ շէմքին,
Ա՛խ... եղբայրներս են ողջ-ողջ յօշոտուած՝
Վիզ ծուռ կը նայեմ ես քար երկնքին...

Կանաչիր անտ իմ, անխ, շուտ կանաչիր,
Բալէքս են նօթի, յոյս իմ կանաչիր:




ԴԱՐԱՎԵՐՋԻԿ ԿԱՐԱԻԱՆ

Անապատին մէջ արնոտ հեաքերով՝
Մոլոր կօրօրուի անծայր կարաւան...
Չուլումն հոն բանայ հազար մի գոյնով
Դժոխքն իսկ խանձող՝ խուժ-զուժ տեսարան...

Քառութեան նոխնիզ յաւիտենական,
Սնուլ անապատներ մորթըուիլ գնան,
Երկնի կուրծքին մէջ շանթերն ալ մեռան,
Դուն լոյս ցերեկով քերթըուիլ գնան...

Թող քու դիակներ գետեր դարձնեն,
Արիւնըդ հոսի՛ փրփուր յարձանքով.
Ծեր ու մանուկներդ ձորերը հարթեն,
Թող բորենիներ հրճուին խայտանքով...

Գնան, կարաւան, ոսներովդ կթոտ,
Ցաւերու տաժան բեռը շալակիդ,
Գերեզմանի մէջ քեզի անձանօթ՝
Դարաւոր բեռըդ՝ գետին զիր... հանգչիր...



Ք Ա Յ Լ Ե Ր Դ

Կաքաւ քայլերուդ ձայնը ներդաշնակ՝
Նուազի մը պէս՝ կ'ունկնդրէ հոգիս,
Որն մեզմ հպումով կոհնի առ կոհակ՝
Կը յուզէ թրթռուն ծովն զգացմունքիս...

Քայլերդ այնքան ք՛քուշ են հոգիս,
Կարծես կը շրջեն աստղերն վրայ...
Քայլերդ այնքան զգուշ են՝ կարծես
Կը շրջեն կարօտ սրտի մը վրայ...

Տատրակ քայլիդ հետ, խօսող, ներդաշնակ՝
Կը հաշուեմ ուժգին տրոփը սրտիս...
Յոյզ ու տենչերուս ծաղիկներն համակ՝
Ոտներուդ ներքե՛ կը սփռեմ հոգիս:



Հ Ա Յ Ր Ե Ն Ա Բ Ա Ղ Ձ

Եւ գնացի սրտիս գծած ուղիով...
Հայրենիքիս պրկնդ, մրկնդ կարօտով:

Անմեզ մանկանց—հրշտակներու լուսաթիւ,
Այլանդակուած դիակներու շեղձակոյտ՝
Տուաւ սրտիս խոյանք հգօր ու թեթիւ
Կատաղութեան սուրբ զայրոյթով հոսանուտ...

Արընթաւալ եղբօր սև սուզը սրտիս՝
Արծուի մը պէս նետուեցանք ես շեշտակի
Դէպ գուլումի աշխարհ, մորմոքը սրտիս...
Սլացանք ես արծուի մը պէս շեշտակի
Հողոյս մօռայլ երկնի թուխ-թուխ ամպերէն
Խլած շանթով, կայծակներով զինավառ...
Անբախդ քոյրեր, ձեր գեղեցիկ աչերէն
Յորդող արցունք—լացող պատին ոտնահար,
Բորբօքեց իմ սրտին խորեր սրբազան
Վրէժի հուրը ուժգին... ես խելագար՝
Մըրըրկեցի ուրազանի մը նման,
Մըրըրկեցի դէպի աշխարհն գուլումի...
Հայրենիքիս ծխացող սուրբ սեղանի
Վրայ գոհելու մասանդ կեանքըս սիրագեղ:
Եւ կռուեցայ ինչպէս կորին կորցնող՝
Առիւծները կը կռուեն... և իմ ահեղ
Մըրընչիւնըս կը համէր, կուտար դող
Գազանացած, արիւնտիւում թշնամուն:

Գնդակներու տարափին տակ՝ հանգարտիկ
Կ'երգէի ես վշտի երզը իմ սիրուն,

Գարնանատեն՝ երգ թախծալի և գողտրիկ,
Եւ վրէժի երգն անողնք, սարսըռուն...:

Ցաւոտ հոգու ընդվզումի այդ պահուն՝
Երբ զգացմունք անհունօրէն կը պոռթկան,
Գնդակ մը տաք ծակեց սիրաբա անարիւն,
Եւ ես ընկայ, ընկայ շանթի մը նման...
Աստուածացնող երկունքներով զալարուն,
Լուռ հատնումի վսեմագոյն այդ պահուն,
Որքան խաղաղ ու երջանիկ էի ես...
Նուէրն անգին հոսէր սրաէս, հոգիէս:

Եւ ուումբերու զփոխային երգին տակ՝
Թմրած մտայ ես հերոսի անուշ քուն...
Բայց չ'մեռայ... կոյր զիպուած էր թէ հրաշք,
Այդ չ'գիտեմ... գթութեան քոյր մը սիրուն՝
Քաղցր կը ժպտէր, երբ որ բացի իմ աչեր...
Վառ, անյողողող գուցէ իմ ջերմ հաւատքն էր
Կեանքս փրկող... և կամ բարի մի գուարթուն
Գթաց ինձի, որ չմեռնիմ բէ մուրատ,
Տեսնեմ հայի վառ արշալոյսն ու գարուն՝
Ապա մեռնիմ... մեռնիմ հանգիստ ու անգարտ...
* *

Իսկ այժմ երբ որ վերջին ծուխը մարեցաւ,
Սառն երկնքի անկարեկիր աչքին տակ...
Ո՛վ մոխրակոյտ հայրենիք, ցաւ մ'անբաւ՝
Կը զալարուի սա տխրամաշ կուրծքիս տակ...
Ճգնաժամի երկունքներովդ ահաւոր՝
Արիւնշաղախ ո՛վ հայրենիք տարաբախք,
Կը ցընցուի ուժգին հոգիս սգաւոր,
Տես, մշտակոծ տանջանքներու հնաւանդ
Սորանիդ մէջ սրբազան, մոլի, տխրաբոյր,

Վշտի բոցով՝ սիրտս կը վառի մոմի պէս...
Եւ արտասուող կամարիդ տակ սեւթոյր՝
Սաղմոսերգու հաւատքս պինդ ժայռի պէս,
Դեռ կըսպասէ ինչպէս Սիմոն ծերունին
Հոն՝ փրկարար ազատութեան սուրբ ժամին...:

Իսկ թէ պիտի ծիրի մոմըս դալկաղէմ,
Եւ սպառուի... դեռ չ'ողջունած լուսաղէմ,
Ես ծնկաչոք պիտի փարիմ ուշագնաց
Վիշտը սիրող նոյն այն փրկչի ոտներուն,
Որ տայ ինձի թե սարեակի սեւագգեաց,
Սերս առած՝ թռչիմ, գնամ շուարուն,
Անցնիմ անխաչ շիրիմներու վրայէն
Երթամ, գտնեմ իմ սիրելի ուռենին,
Մեր բակին մէջ՝ մենակ, տխուր կծկտած...
Վստահ եմ որ աւերիչ ձեռք չէ՛ դպած
Թախծոտ ոգոց վիշտը զբրկող ճիւղերուն,
Եւ անողորմ մատները պիղծ չեն փշրած՝
Դալարագեղ մատաղ սասերն իր ճկուն,

Չէ, չէ թողմած, նա թոշնած չէ, վստահ եմ,
Չէ որ ես զայն ուռգած եմ արցունքով...
Թողէք, թողէք, որ իմ սև բոյնը հիւսեմ
Արտասուներով և հոգեցունց տաղերով,
Անոր կանաչ ճիւղերուն մէջ երազող,
Այնչափ երգեմ... այնչափ սգամ, մինչև որ՝
Ցաւոտ երգէս պատուի խաւարը մաշող...
Մինչև լուսոյ աստղն ցոլցըլայ հեզանազ
Արտասուքէն կուրացած իմ աչերուն,
Մինչև հասնի Հայ ծիծեռնակն սրավաղ՝
Գարնանաւէտ ուրախ երգը շրթներուն...:

Օխ... այն ատեն՝ երջանկութեամբ խելայեղ՝
Խնդութենէս թող ես լինեմ սրտածաք,
Անշնչացած, թաւալզւոր ու անշեղ՝
Ընկնեմ ճիշդ հոն, ուր որ մայրս հերարձակ,
Անսուշ երգով մանուկ ճօճքըս կօրօրէր:

Զուարթ երգով, թաղեցէք ինձ մէն մենակ
Իմ պաշտելի ուռնու տակ թաւատուեր,
Սուգ մի ընէք, զի այդ մահ չէ ցաւագար,
Այլ ցանկալի անմահութիւն ինձ համար:



ՎԱԽՆԱՄ ՄԵՌՆԻ

Սիրեցի՛ քեզ, սիրով մը բուռն և անհուն,
Սիրով մը որ՝ գուցէ ոչ ոք չը սիրեց...
Վկայ երկինք, լուսին, աստղեր շողշողուն,
Եւ ոսկորներս... մաշուած մարմինս սիրատենչ:

Դուն առինքնող հմայքներովդ կուսական՝
Անմեղութեան ծոցին մէջը լուսացնոր՝
Ծիլ-ծիլ բացուած անմահ վարդի մը նման,
Ինձ քու շուաքը դարցուցիր վշաօրօր...

Իսկ քու կարօտ, անխ. կարօտդ ոգեհան՝
Գարունս մաշեց դաժան ձմրայ սարսուռով...
Կեանքս կուսամ, եթէ նոյն իսկ մէկ վայրկեան
Արբենամ ես երջանկացնող քու բոյրով...

Բնյց... կնկէի գլուխս տուած քո կրծքին՝
Մեռնել այսպէս... մրկող կարօտըս չառած,
Վարդ քաղել... չեմ յանդգնիր ո՛վ անգին,
Վախնամ մեռնի սէրըս այնքան փայլալայած:



ԳԱՐՈՒՆՆ Ո՞ՒՐ ՄՆԱՅ

Ո՞ւր մնաց գարուն, ասած ծիծեռնակ,
Ո՞ւր աւետաբեր ճիչերդ սրտայոյզ,
Սև սպասումի թունոտ շունչին տակ՝
Մեր երազները կը մեռնին անյոյս . .

Մեր շուրջ փոթորիկ, խաւար անթափանց
Ասած, ծիծեռնակ, գարունն ո՞ւր մնաց:

Ա՛խ, մեր մարմնի մէջ մաշուած, քրքրուած,
էլ կարողութեան չմնաց նշոյլ,
Ստուեր մը կարծես՝ որ վշտահալած
Աւերակներու մէջ յածի տխուր:
Արեան ծովերէն հեւ ի հեւ փախած
Ծիծեռնակ, ասած, գարունն ո՞ւր մնաց:

Տես, էլ չթողին քար քարի վրայ,
Բոյնդ էլ քանդեցին սիրուն ծիծեռնակ,
էլ մեր երգիքէն ծուխ չի բարձրանայ,
էլ չի պլպլայ հայրենի ճրագ,
Անվերջ ձմեռն է մեր կուրծքին չոքած,
Ասած, ծիծեռնակ գարունն ո՞ւր մնաց:

ԴԱՐԱԻՈՐ ԿԱՂՆԻՆ

Դարաւոր կաղնին իր կուրծքը հպարտ
Տուած մոլեգլին խենդ մըրիկներուն,
Հսկայ տիտանի մ'նման վէս, անպարտ՝
Դեռ ևս կորովի կը մնայ կանգուն . .

Միրտը ճեղքած է կայծակն անարկու,
Ահեղ փոթորիկն ճողակտոր արած,
Անսիրտ անցորդը վատ, արիւնարբու՝
Շուքը վայելած լեարդն է յօշոտած . . .

Բայց նա անվհատ, կամքով աննըկուն
Անողոք բախտի սև հարուածներուն
Դէմ կանգնած մենակ դեռ կարհամարհէ՝
Զիւնի ցուրտ պատանք, և բուքն մահաւեր . . .

Քանի անգամներ կատաղի հովին
Լքած էր հեզնոտ մահու մեղեդին
Եւ դալար, կանաչ ոստերն հեծելէն
Խլուած, լալագլին մայրենի բունէն:

Քանի անգամներ խելագար կարկուտ
Ծեծած, ջախջախած է իւր թև թիկունք,
Քանի անգամներ անձրև հեղեղում՝
Թերթերունքներէն թափեր դառն արցունք:

Թէև մերկացած իր նախնի փառքէն,
Թափո՛ւր երբեմնի դիւթիչ հմայքէն,
Թէև վիրաւոր, հիւժուած՝ դալկացած
Հոլանի թևերն են կմախքացած.

Քայց իւր արմատը զեռ ևս կենսունակ՝
Կապրի անփասս պահուած հողին տակ...

Գարունը կուգայ... զարաւոր կաղնին
Կանաչ տերևով կը պճնագարզուի,
Եւ իւր շուքին տակ կը բանայ կրկին
Նահապետը իւր սեղանն բարելի...:

ԿԱԹԻԼ ՄԸ ԱՐՑՈՒՆՔ

Մարած աչերուս խորերը պղտոր
Կաթիլ մը արցունք պահեր եմ աղի,
էս սիրտըս մեռած, սիրտըս սգաւոր՝
Կը հալի ինչպէս մոմը դապաղի:

Ա՛յ, հովեր, հովեր, անուշիկ հովեր,
Ո՛ւր պաշտելի մօրս շիրիմը անշուք,
Ա՛խ, իմ կուրացած աչերուն խորեր՝
Կարօտով մրկած կայ կաթիլ մ'արցունք:

Թող որ ես զրկած գերեզմանն իր ցուրտ՝
Սրբազան աւանդն անոր նուիրեմ,
Ա՛խ, մեռած սրտիս ցաւերն են անգուլթ,
Աշխարհն է անգուլթ, ես հէք որք մըն եմ:

ԱՅՍ ԳԻՇԵՐ

Քարայրին մէջ այծեամն սիրուն՝
Անհանգիստ է այս գիշեր...
Անտառն քնատ, աստղերն արթուն
Ձեն քնացած այս գիշեր:

Փշի նման զարդերս բոլոր՝
Խոցեցին ինձ այս գիշեր...
Ձեն, չեն փակուիր աչերս պղտոր,
Իմ անուշ քննն է փախեր:

Կը շրջուիմ շամփուրի պէս
Անկողնիս մէջ անդատար,
Կը թըշթըշան արցունքներըս...
Կ'խօսին հաւերն միալար:

Կարծան արդեօք, թուխ-թուխ աչեր
Աչերէս քուն կը խլեն...
Թէ հայրենի սև-սև վշտեր
Հոգիս զրկեն, պարուրեն:

Քարայրին մէջ այծեամն սիրուն
Անհանգիստ է այս գիշեր,
Անտառն քնատ, աստղերն արթուն՝
Ձեն քնանար այս գիշեր...:

Գ Ր Ի Չ Ս

Դալուկ ճակտիս՝
Եւ արտասուք աչերուս մէջ ծովացած՝
Խռով բռնած իմ հոգին,
Ովկիաններու ալեկոծում սրտիս խոր,
Չեռքըս առի զրիչս,
Տխուր փորձով մ'շուարուն՝
Պատկերելու հայի տանջանքն անանուն...

Բայց ինչպէս որ դարեր մաշած ծերունին՝
Կը կքի իր բեռան տակ ծանրատար,
Կքէց, ճռուց իմ զրիչն ալ
Հառաչներու բեռան տակ...
Ճայթէց անեղ... ինչպէս կայծակ կը ճայթի,
Եւ փրշրուած՝ դողդոջ ձեռքէս ընկաւ վար:

— Հոգուս, սրտիս լեզու աննենդ ու արդար,
Ախ, ինչո՞ւ ճգնաժամի բոպէներուն այս մաշող
Լքեցի՞ր ինձ ու մեռար...

— Ինչո՞ւ համար
Ես չուզեցի դաւաճանել արուեստս սուրբ ու վսեմ,
Արուեստս նուրբ ու քնքուշ,
Դեռ մարդկային բառարանները ապուշ՝
Չստեղծեցին բառեր տխուր, բառեր ցնցող ու
հզօր,
Չգացմունքիս համազօր...

Թաղի՞ր, զրիչդ, վշտի լեռան սոսկ թաղի՞ր,
Հայի խաչը փշապատ՝ համըր լեզուիս վրայ դի՞ր,
Եւ ինձի եկ, աստեղագարդ

Խոր գիշերներ մէն մինակ,
Հոգուս հզօր խոյացումով բանամ քեզ,
Երկնի ծալքերը անհուն,
Ամպերու սիրտ սղաւոր,
Աստղերու կուրծքն ազամանդ,
Եւ դուն այնտեղ պիտի տեսնես ահաւոր
Անհունութիւնն Հայ ցաւի
Տրեզերքներ լեցընող...

Մ Ն Ա Ք Բ Ա Ր Ե Ա Ի

Մնաք բարեան, տանջանք ու վիշտ,
Իմ ընկերներ վաղեմի,
Լացի, սուգի սե անժպիտ
Աշխարհս ձեզ թող լինի...

Ես պլլըլուած վերջալոյսի
Ոսկի, անմահ շողերուն,
Պիտի սուրամ գտնել լոյսի,
Ժպտի աշխարհ մը հեռուն...



ԶՈՒԱՐՃԱԼԻ ԿՏՈՐՆԵՐ

ԿՈՒԼ-ՏՈՒՐ-Ա.ԿԱՆԻ ԳՈՎՔԸ

Ե՛կ անկեմ քեզ, զինի՛ կարմիր,
Կուլ-տուր-ական մը եմ ընտիր...
Ե՛կ, հոգիս, եկ, ո՛վ մտերիմ,
Առանց քեզի ես կեանք չունիմ:
Թէ կոկորդէս վար արշաւես՝
Անյաղթ առիւծ կը դառնամ ես...:

Սաամոքսիս հիւրասենեակ՝
Յարգարած եմ քեզի համար,
Գնա՛ վառել հոն հո՛ւր, կրակ,
Ո՛վ պաշտելի անմահ նեկտար...:

Օրհնեա՛լ լինիս, Նոյ նահապետ,
Մեր վիշտ, հոգսեր գիւտովգ անհետ՝
Կորչե՛լ կերթան անհունութեան
Ծալքերուն մէջ, լնւո ու անձայն...
Մինչ իսկ անկեմ ես օրն ի բուն,
Չեմ մերկանար Նոյի հանգոյն,
Եւ թոյլ չեմ տար որ ագռաւներ
Իմ երազող կտցեն աչքը...:

Ա՛հ միայն թէ... պատերուն հետ
Կատակ կանեմ... ցատկեմ ետ, ետ:

Յայնժամ ժպտի՛ ինձ ողջ աշխարհ,
Լոյս ես բոլոր, չկա՛յ խաւար...:

Ոտներս առանց զսպանակի՝
Կը թրթրուան ճօճանակի,
Կը կաքաւեն երկինք, երկիր,
Խնդան ծառեր քրքշալիր,
Եւ պատերը շուրջս պար բռնած՝
Կը սուրսուրան ի ձախ, ի յաջ...:

Հայհոյանաց երբ գունագեղ՝
Ընտրելագոյն փրթի՛ հեղեղ,
Բաքոս արքան քանի՛ հպարտ
Յնծայ, ժպտի, խայտայ՝ զուարթ...:

Դուն երկնային նեկտար քաղցրիկ,
Քեզմով ապուշն դառնայ ճարպիկ,
Ծանրալեզու, թոթովախօս՝
Գոռ բեմբասաց մը պերճախօս...:

Անմահ զինի, գոյնդ է կարմիր,
Սիրուհիիս թո՛ւշն էլ կարմիր.
Թոյրդ անմահ քաֆուր վարդի
Շող տաս նման նռան հատի.
Ո՛հ, ի հեճուկս Թաւշանջեանի
Ե՛կ, անկեմ քեզ կարմիր զինի...:

Օ՛հ, քանի՞ն թո՛ւնդ, գունաւոր,
Հայրենասէր դառնամ կտրիճ,
Ազգիս ուխտեմ արիւնս բոսոր,
Անձնանուէր դառնամ փրկիչ...:

Գիշերն առանց լուսնիակի,

Սէրը առանց զոյգ սրտերի,
Սեղանն առանց թարմ գինիի
Ի՞նչ շէնք, շնորհք, հրապոյր ունի...

Իսկ թէ բաժակս մնայ դատարկ՝
Եւ չմնջէ մշտափրփուր,
Ուրախութեանս ցամաքի ակ,
Ո՞հ, ինձ բռնէ մահուան սարսուռ:

Ո՛վ դուն բաքոս, աէր ողորմած,
Թէ զիս պատժես օր մը յանկարծ,
Քաղցրը զինով լիք տակառի
Մէջ, զլիսիվայր կախէ ինձի:

Իսկ թէ բողոքն ստամոքսի
Դուրս գայ բերնէս շատրուանել ..
Չկայ բաժին ինձ յանցանքի,
Անզգանն է գայն խարդախել ..
Հոգ չէ բնաւ, թէ փորահար՝
Կը տառապի դատարկ քսակս...
Եւ ընտանիքս ալ վշտահար
Վերեզմաններ զրկէ հասակս..

Ես պիտ տնկեմ, կեցցես ո՞ փոր,
Որ Շարայէն էլ շատ ես խոր,
Կեցցէ՛ գինին, ապրի՛ բաքոս,
Կուլ-տուր-ականք, հուռայ, հոս, հոս:

Իսկ թէ օր մըմեռնիմ յանկարծ,
Կուլ-տուր-ական բերանս ալ բաց,
Դէմքըս տխուր, աղաչաւոր,
Շուտ հասցուցէք գինի ազուր,
Լցէք բերանս կուժ մը ողջոյն,
Յառնեմ իսկոյն... տամ ձեզ ողջոյն...

ՀԱՐՍՆ ԵՒ ԱՔԱՂԱՂ

Նույ՛ց մը նախնի համեստութենն

Աքաղաղը շիկահեր՝
Սէգ քայլերով անվեհեր,
Յոխորտանքով սնամէջ
Շրջան կընէր բակին մէջ:
Հօտ մը ողջոյն հաւերու
Կեցած իրմէ քիչ հեռու,
«Փառքքեզ Աստուծ» ձայնէին,
Ի տես զիւցազն աքլորին...

Նորահարսը դուրս ելաւ,
Սիրուն երեսը բաց էր,
Աքաղաղը դէմն ելաւ
Լաչակի ճոթ փրթած էր...
Հարսն հանեց կարմրուկ,
Վրան եկաւ մարմրուք,
Չէ՞ որ աքլորն ալ մարդ էր,
Երեսն թողնել բաց մարթ էր,

Խնդիր բարդ էր և կնճռոտ:
Հարսին բռնեց մեծ շփոթ,
Էս մեծ յանձանքն քաւելու
Համար՝ ծոմ էր բռնելու..

Աքաղաղէն զատ՝ ո՛չ ոք
Կար բակին մէջ... անողոք
Կեսուրն հեռուանց կը զիտէր
Թէ իր հարսուկըն կիրթ էր.

Աքլորն տեսաւ հարս թէ չէ՝
Հաչակն իսկոյն վնւր քաշեց,
Կեսուրն ուրախ՝ «Թող կեցցէ
Իմ պարկեշտ հարսը» գոչեց.

Կնւ, կնւ, լի, կնւ, կնւ խօսեց
Աքաղաղն յաղթական,
Համեստ հարսուկն չխօսեց
Նօթն տարի հետ իր էրկան.

Հաւերուն հետ մեր աքլոր
Սիրաբանէր ամեն օր,
Երջանիկ էր աքաղաղ
Քան մեր հարսուկը սարսաղ:



ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՉՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱ ՉՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

I ԳՈՒՄԱՐ

Անշուշտ կառնեմ քեզ, աղջիկ անմահ?
Քայց նախ՝ բեր հաշուեմ ձիրքերըդ համայն,
Առատ բաժինքդ, ոսկնով, արծաթով...
Բամբիջ ձեռներդ իր անմահ գեղով,
Պարկեշտութիւնդ ոգով հնազանդ՝
Ինձ պիտ պարզե՛ կ' կեանք, կ' եռանդ,
Եւ քու շնորհներու համագումարը՝
